Dijiteq Expo 2012-ին կրթահամալիրի մասնակցության մասին հաշվետվություն

Կրթահամալիրի պատշաճ մասնակցության համար կրթահամալիրը ներկայացնող խմբի պատասխանատուները հոկտեմբերի 4-ին 15:00-ին մեկնել են Մերգելյան ինստիտուտ տաղավարի ձևավորման համար:

Աշխատանքներն ավարտվել են 19:00-ին:
Հոկտեմբերի 5-ին 10:00-ին կրթահամալիրի տաղավարը պատրաստ էր ընդունելու այցելուներին:
Միացված էին 2 պրոեկտորները, էկրաններով պտտվում էին կրթահամալիրի ուսումնական նախագծերի մասին պատմող ֆիլմերը, հոլովակներ:
Այցելուներին կրթահամալիրը ներկայացնելուց հետո ցուցադրում էինք աստղացուցարանն ու ֆիլմի երկու բոպեանոց դիտում կազմակերպում, հրավիրում մեդիակենտրոն՝ ամբողջությամբ դիտելու: Ներկայացնում էինք աստղադիտակը և սովորողների վերջին նվաճումները:

Կրթահամալիրի հերթապահ խմբերը ըստ սահմանված գրաֆիկի այցելել են տաղավար, լուսաբանել:
Մեր տեխնիկան աշխատել է անխափան:
Միակ կորուստը եղել է էլեկտրոնային գրիչներից մեկը:
Smart response վահանակներից մեկի «առևանգումը» կանխվել է:

Երեք օրերի ընթացքում բաժանվել է կրթահամալիրի 800 տեղեկատվական թերթիկ:

Առավոտից երեկո պարբերաբար կազմակերպել ենք ֆլեշ-մոբեր, որին միացել են նաև այցելուներ և այլ տաղավարներից մասնակիցներ:

Երրորդ օրը ֆլեշ մոբը կազմակերպվել է շենքի դիմաց, ավելի լայնամասշտաբ լսարանով:

Լուսաբանման նյութերը տեղադրվել են mskh.am –ում, Dijiteq Expo 2012-ի էջում:

http://mskh.am/am/23160

http://mskh.am/am/23159

http://mskh.am/am/23157

http://mskh.am/am/23155

http://mskh.am/am/23153

http://mskh.am/am/23188

http://nor.mskh.am/node/4354

http://mskh.am/am/23186

http://mskh.am/am/23185

http://mskh.am/am/23182

http://mskh.am/am/23178

http://mskh.am/am/23205

http://mskh.am/am/23175

http://mskh.am/am/23190

http://mskh.am/am/23152

http://mskh.am/am/23150

http://mskh.am/am/23147

http://mskh.am/am/23144

http://mskh.am/am/23143

http://mskh.am/am/23142

http://mskh.am/am/23139

http://mskh.am/am/23137

http://mskh.am/am/23136

http://mskh.am/am/23134

http://mskh.am/am/23120

http://mskh.am/am/23117

http://mskh.am/am/23109

http://mskh.am/am/23108

http://mskh.am/am/23107

http://mskh.am/am/23104

http://mskh.am/am/23097'

http://mskh.am/am/23073

Բոլոր օրերին իրականացվել է «Դասարան անիվների վրա» ծրագիրը, բաժանվել է 150 կտոր գիրք:

Կրթահամալիրի ծրագրերը, նախագծերն ու տեխնիկան ներկայացրել ենք առանց ջանք խնայելու, մինչ ձայններիս կտրվելը:
Տուժել է Լևոն Արամյանը, ով հաջորդ երկու օրերին չի մասնակցել տաքություն ունենալու պատճառով:
Արմինե Ղազարյանը խզված ձայնով պարտաճանաչ ծանոթացրել է աստղացուցարանին:
Տիգրան Պարսիլյանը ամենայն ուշադրությամբ կազմ պատրաստ և անխափան է պահել տեխնիկան:

Ես՝ Զարուհի Առաքելյանս մեր խմբին սպասարկել եմ կրթահամալիրի լոգոյով շապիկներով, բեյջերով, կրծքանշաններով: Հերթապահությունս անց եմ կացրել ճշգրիտ և հստակ:

Info. Mskh-ը պարտադիր ներկա է գտնվել տաղավարում, լուսաբանել:

Այս անգամ ընդմիջման հարցը կարգավորված էր: Ցուցադրության համեղ գործընկերը անվճար հոթ-դոգեր էր բաժանում մասնակիցներին: Կծու մածուկներից հետո համտեսում էինք Unicomp-ի տաղավարի խնձորները՝ պարտադիր պայման էր սրանց հերթականությամբ ուտելը:
Մեր տաղավարը կիսող Սլավոնական համալսարանի ներկայացուցիչները առաջին օրը միացրել էին իրենց պրոեկտորն ու սպասում էին, որ ինչ որ մեկը իրենց ինչ որ հարց կտա: Ակտիվությունն ու այցելուների հետաքրքրությունը մեր տաղավարի նկատմամբ ստիպեց նրանց առաջին օրվա վերջում հավաքել իրենց տեխնիկան ու այլևս չվերադառնալ: Ազատած սեղանն օգտագործեցինք շատ արդյունավետ:
Ցուցադրության վերջին օրը աշխատանքներն ավարտեցինք 16:00-ին: Մինչ 17:00-ն հավաքեցինք մեր ողջ գույքն ու տեխնիկան, վերադարձանք բարեհաջող:

Հարևան տաղավարների կողմից հնչած մի քանի առաջարկներ՝
Orange Armenian առաջարկեց ծառայությունների փաթեթ:
Արարատ բանկը նվիրեց անվճար պլաստիկ քարտ ձեռք բերելու 16 փաթեթ, որից մնացել է 3-ը, մյուսները բաժանել եմ կրթահամալիրցիներին:
´´Mathematics´´ առաջին առցանց կրթական համակարգի հիմնադիր Դավիթ Նիկողոսյանն առաջարկեց 4-6-րդ դասարանցիներին զրանցվել իրենց կայքում, և մասնակցել առցանց մրցույթների:

EnglishTime կենտրոնը հատուկ առաջարկ է ներկայացրել ԴիջիԹեք 2012-ի մասնակից կազմակերպություններին՝ տրամադրում են հատուկ զեղչ գործարար և SS անգլերենի կորպորատիվ դասընթացների համար:

Dijiteq expo-ի կազմակերպիչները տվեցին 2013թ. Հունվարի 25-27-ին Աղվերան հանգստյան գոտում կազմակերպվող Business Innovation Forum-ի ծրագիրը և սիրով հրավիրեցին մասնակցելու: